Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1578 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԿԱՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում (այսուհետ՝ կոմիտե) պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կատարողականի գնահատումը հիմնվում է հետևյալ չափանիշների վրա՝

1) կոմիտեի կողմից մատուցվող ծառայությունների ժամկետի կրճատում կամ որակի բարձրացում, ինչպես նաև հարկային կամ մաքսային վարչարարության ժամկետի կրճատմանն ուղղված նախագծերի իրականացում.

2) հարկային կամ մաքսային գործընթացների պարզեցմանը (այդ թվում՝ թվայնացմանը), հարկային կամ մաքսային վարչարարության (այդ թվում՝ վերլուծական կարողությունների) զարգացմանը, իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված նախագծերի (այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնությունների գծով) իրականացում.

3) կոմիտեի լիազորությունների շրջանակներում հայտնաբերված իրավախախտումների քանակ, բնույթ, չափ կամ հսկողական միջոցառումների արդյունավետություն.

4) կոմիտեի կողմից դատական արդյունավետ պաշտպանություն.

5) հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների պարտավորությունների գանձման արդյունավետություն և չափ.

6) ներքին հսկողական կամ հաշվառման համակարգերի կատարելագործում.

7) կոմիտեի աշխատակիցների գծով ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքերի, հանցագործության հատկանիշներ պարունակող գործողությունների կանխում, բացահայտում.

8) կոմիտեի աշխատակիցների աշխատանքի որակ, նախաձեռնողականություն, պատասխանատվություն.

9) կոմիտեի ծախսերի խնայողություն և միջոցների տնտեսում.

10) բարեվարքության բաղադրիչի ստուգմամբ իրականացված պատրաստման կամ վերապատրաստման հավաստագրի ստացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ